

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈԿԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 փր.
Վեցամսեայ 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
2 քիւ մեկ ծրարով
Տարեկան 14 փր.
Վեցամսեայ 7 փր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տղ.
Վեցամսեայ 1.50 "

Կ Ա Ն Խ Ի Կ

—o—

Մանուկան տղր
20 տարեկան



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԵ

Rédaction du journal

„Ipravounk“

В. В. А. (Bulgare)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

—o—

Դրոպիկիս ևս
չկն տրոխր

ՈՐԲԱՆԱՄԻ ԶԵՆՈՅՑԸ

Հայ դերասանական Վեպոյ խումբը՝ որ պատրաստուած է վաղը «Վահան Սամիկոնեան» ազգային թատերաստի տեսակցութեամբ, խնդրեց ընկերութեանէն յետաձգել ընդհ. ժողովոյ Դ. նիստը:

Դիւանս նկատելով նաեւ թէ ըստ կառավարութեան հրահանգի ազգ. վարժարանը պիտի մաքրուի ու հաւանեխուր, որոշեց ընկերութեան ընդհ. ժողովոյ Դ. նիստը յետաձգել յառաջիկայ կիրակի օրուան, 2 դեկտեմբեր, կէս օրէն վերջ ժամը ճիշդ շին, ազգ. վարժարանի սրահին մէջ:

Դիւան Որոշանաւ Ընկերութեան Ատենադպիր Ատենապետ Արշաւ Փաշաջեան Զ. Գորպիսեան

Վառնա, 24 նոյ. 1901

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՈՒԴՍՐՁՔ

Սոսոյս 10ին Սերպիոյ ծերականոյն մէջ մէկ քանի ազգեցիկ անդամներ հարցոցին նախարարացեալ և արտաքին գործոց նախարար Մ. Վուլչի թէ թուրքիա բնակող Սերպերուն վիճակին բարեփոխութեանը համար սերպ կառավարութիւնը ինչ միջոցներ ձեռք առած է ու ինչ ընել կը խորհի:

Նախարարացեալը երկար ճառով մը բացատրեց թէ թուրք իշխանութիւնը գէշ կերպով վարուած է հին Սերպիոյ քրիստոնէից հետ և Ալպանացիներուն դուր ծած վարապետութեանց ուժ տուած է: Նաեւ ինչեց նախարարը թէ Ալպանացիք նպատակ ընտրած են իրենց երկրին, իսպիւպի գաւառին մէջ և Սերպիոյ սահմանները քրիստոնէայ չի թողուլ, զանոնք հալածելով ու ջարդելով, որպէս զի այդ գաւառները զուտ իսլամական նահանգի կերպարանքը առնեն ու իրենք բացարձակ տէրը ու ժառանգորդը ըլլան:

Սերպ կառավարութեան բողոքները անխելի մնացած են Բ. Դր. րան առջեւ. նոյն իսկ Սերպիա սպառնացած է բռնի միջոցներու դիմել Ալպանացիներուն դէմ, եթէ Սուլթանի կառավարութիւնը զա

նոնք չի զսպէ ու սերպ ազգաբնակչութեան վիճակը չի բարելաւէ: Մեր այս խիստ դիմումն ալ անխելի մնաց, ըստ նախարարը, և ի վերջոյ Դուռը մեզ պատասխանեց թէ Ալպանացեաց վերադարձած ռեզիդենտը անհիմն են հետեւաբար ըսել ուղեց թէ սերպ կառավարութիւնը կը ստէ և թուրքիոյ յայտնի թշնամիներուն գործիք կըլլալ:

Դուռը կը կարծէր գիտնալ թէ Պուլկար Մակեթիոնական գոմի թէին նմանող կապակիրպութիւն մը կայ Սերպերուն մէջ ալ, որ Պուլկարիներուն հետ խօսք մէկ րամ ըլլան. նոյն իսկ Դուռը րստ թէ Սերպիայէ գէշ փոխադրուած ու թրքահայատակ Սերպերուն բաժնուած է, ինչ որ բնաւ հիմ չունի: Բայց Դրան այս կարծիքէն կը հետեւի, թէ նա պուլկար լեզուաբանականներու շարժումներուն պատճառաւ Սերպերէն ալ կը կասկածի ու անոնց գէժ ալ տմարդօրէն կը վարուի:

«Վերջապէս մեր բոլոր ջանքերը ապագին մնացին հին Սերպիոյ մէջ բնակող մեր ազգակիցներու անտանելի վիճակը բարեփոխութեամբ: Դիմեցիք Ռուսիոյ ալակ ցութեան, անոր Պուլսոյ դեսպանը Պ. Զինովիէֆ ուժ տուաւ մեր դեսպանի դիմումներուն: Քննութիւն բացաւ Ալպանացեաց գործած վարապետութեանց մասին. և այդ քննութեան արդիւնքը այն եղաւ որ մեր բոլոր արտունջները հաստատուեցան, ուստի ուսու դեսպանը պահանջեց թուրքիաէն որ սերպ բնակարանները ապաւորին, յանցաւոր պաշտօնեաները պաշտօնանկ ըլլան և այլն: Դուռը գործադրեց այս բոլորը: Այժմ կը մնայ Սերպիա ապաստանող 1500ի չափ թուրքերոց սերպերու իրենց տեղերը վերադառնալուն ապահովութիւնը ձեռք բերել: Այս խնդիրը դեռ առկա է կը մնայ: Նաեւ մենք պիտի պահանջենք Ալպանացիներու պէնքերը ժողովել տալ. և թէ Դուռը չուզէ մեզ զոհացում տալ, այն առիտն պիտի դիմենք մեծ պետութեանց ու պիտի պահանջենք որ Պերլինի 23 յօդուածը գործադրեն»:

Վերջապէս Սերպիոյ նախարարացեալին այս պաշտօնական յայտարարութիւնը ցոյց կուտայ թէ թուրքիոյ հետ բարեկամական յարաբերութիւն ունենալէ շատ հեռու է Սերպիա եւս, և պուլկար պատճառէ մը կրնայ մեծ փոթորիկ մը ծագել:

Սերպ նախարարացեալի ճառին վերջին մասէն երեւաց թէ Պուլկարի երեք սրաւ պետութիւնները Պուլկարիա, Սերպիա, և Սեւ Ղեռսերներուն կապուած են իրարու և ըստ ամենայնի Ռուսիոյ թեւարկութեան ու պաշտպանութեան տակ կը գտնուին:

Պուլկարիոյ արտաքին գործոց նախարար Մ. Տանէֆի անցեալ շաբթու մէջ արտասանած ճառը բաւական որոշ կերպով կը բացատրէ իշխանապետութեան արդի արտաքին քաղաքականութիւնը:

Մ. Տանէֆի Պուլկարիոյ օտար պետութեանց հետ ունեցած յարաբերութիւնը բացատրելու օգտին ըսաւ թէ դրացի փոքր պետութեանց մանաւանդ Սերպիոյ հետ ջերմապէս բարեկամացած են. Ռուսիայի հետ լաւ յարաբերութիւն կը մշակեն. իսկ Պուլկարիան ազատուի տէրութեան, Ռուսիոյ հետ, վերջին տարեկան բարեկամացած և մտերմական խիստ ամուր կապերով կապուած են:

Սակայն արտաքին գործոց նախարարը խօսքը թուրքիոյ մասին բերելով, առանց վարանելու ըսաւ, թէ ցորչափ Մակեթիոնի ներկայ վիճակը շարունակուի, Պուլկարիոյ յարաբերութիւնը թուրքիոյ հետ երբեք լաւ չպիտի ընթանայ. և վերջապէս Պերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնները իրենց ստանձնած երաշխաւորութիւնը ցորչափ չի գործադրին, Մակեթիոնական լեզուաբան ընկերութիւնը չպիտի կողմնադրուի:

Թուրքիոյ մասին նախարարին ըրած այս պաշտօնական յայտարարութիւնը բաւական որոշ կերպով կը մեկնէ, կը պարզաբանէ ցարդ յայտնուած այն կարծիքները թէ Պուլկարիա Ռուսիոյ

կռթնած և Սերպիոյ ու Գարատաղի հետ համաձայնած, պիտի ջանայ ամեն գնով Մակեթիոնի թրքական ուղղակի լուծէն ազատել. և մինչեւ որ իր այս նպատակին չի հասնի չի պիտի դադարի յայտնի կամ ծածուկ Մակեթիոնական լեզուաբան ընկերութեան ուժ տալէ: Եւ արդէն պուլկար կառավարութիւնը պարտաւորուած է այդ ընթացքը բռնելու հանդէպ Մակեթիոնացեաց, քանի որ անոնց դատը նոյն ինքն Պուլկարական ազգային դատն է: Պուլկարիոյ ժողովուրդը, որուն արդէն մէկ կարեւոր ու ազգեցիկ մասը Մակեթիոնացիներէ կը բաղկանայ, արտով ու մտքով կապուած է Մակեթիոնի հետ. հետեւաբար, որ կուսակցութիւնը որ ալ Պուլկարիոյ վարչութեան ղեկը վարել կոչուի ժողովուրդին քուէովը, պարտաւորուած պիտի ըլլայ զինք ընտրող այդ ժողովուրդին էն գլխաւոր բաղձանքը իրականացնել, Մակեթիոնացիները թրքական բնութեանէն ազատել ջանալ:

Յարգ չեղաւ նախարարութիւն մը որ իսկապէս ներկայ Գարապէլովի նախարարութեան չափ Մակեթիոնացեաց հակընդդէմ երեւար, Բայց ահա այսօր արտաքին գործոց նախարար Մ. Տանէֆի պաշտօնական յայտարարութիւնը ցոյց կուտայ թէ նախորդ Ռատուլուֆի նախարարութեան չափ ներկայ Գարապէլովի և Յանգովիսթ. ներք ալ մակեթիոնաւէր են:

Ահա ազգային դատը այսպէս կը պաշտպանուի. օտար թշնամիին դէմ ներքին կուսակցական ամեն նկատումներ դադարելու են:

Գորպիսեան

ՀԱՅՅԵՐԸ ԵՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ

Սենյ ճիշդս կապէր իր վերջ ընկեր թիւերուն մէջ Մասունցեաց մասին պատմական և տեղագրական ստուգապատում յօդուածներ հրատարակելով, գովասանք կը կարդայ Մասունցի հայ բնակական հերոսներուն, անոնց վերջերս ցոյց

ուսումնասիրությունները կը դը-
րուստեն և չըլլալու հետեւեալ
թուրքէն քաջաւորութեամբ ու
ուսումնասիրութեամբ կ'ստեղծու-
նէ, իսկ թուրք կառավարութեան
սուտ ամբաստանութիւնները իր
ճշմարտութիւն հրատարակող եր-
բեմն թրքաւոր անգլիէրէն թեր-
թերուն գէտ զարթոյթ յայտնելով
խտաւր կը պարսուէ :

«Տէյլի Գրոնիք» որ սկիզբէն
մինչեւ այժմ ուժգնօրէն կ'ուսումնա-
կը թուի Հայկական սուրբ դատին,
ու ի պահանջն հարկին թուրք
քաղաքականութեան խարաղանիչ
խմբադրականներ հրատարակել
չի գտնար և Սասունի լեռնական.
ներուն վրայ ունեցած անհուն խան-
դաւանքը միշտ կը յայտնէ,
այսօր ակամայ կը հրատարակէ
այն սուլթանաշունչ տեղեկագրու-
թիւնը, որ կարծէ ստորիւ հա-
մառօտակի թարգմանել տաւնց
բուն նշանակութիւնն չիղիւր :

«Մի քանի հայ աւագներ,
իրենց հետ 60 չափ կիներ և տը
ղաքներ գերած, Սիւրբանի կոչ-
ուած խմբապետի մը առաջնոր-
դութեամբ, Սասունի լեռներուն
վրայ, Սուլի մօտ եղող Արակ
վանքը» ապաստանած էին ու
խիստ միջոցներով և սպառնալիք-
ներով դրած կը պահանջէին իրենց
գերիներէն : Այս լուրը իսկոյն կը
տեղեկագրուէ հայ եպիսկոպոսի
մը միջոցաւ թրքական կառավա-
րութեան, որ կը փութայ զրկել
վաշտ մը պաշտպանելու համար
գերիները : Այն ատեն աւագակ-
ներէն վեց հագի ալ վրայ կը հաս-
նին ու սաստիկ ընդհարում մը
տեղի կունենայ, յորում աւագակ-
ներէն երկու հագի կիներն ու մէկ
թուրք կսպանուի, ուրիշ մըն ալ
մահացու վերջ մը կըստանայ :

Բարբառաղաբար «Տէյլի Գրո-
նիք» բնաւ հաւատք չընծայիր
այդ սուլթանաշունչ տեղեկագրու-
թեանց, զոր իր Պոլսոյ թղթակիցը
կը հաղորդէ իրեն : Ուրոյն խըմ-
բագրականով մը կըզգոյշացնէ իր
ընթերցողները այդպիսի թղթակ-
ցութեանց վրայ ամենազոյլն վս-
տահութիւն ընծայելէ ու կըսէ թէ
այն Համիտի խորամանկ գիւտա-
գիտութեան արգիւնքն է, որով
զինք ու է պատասխանատուու-
թիւնէ հեռի պահել կուզէ, Միտ
պիտութեանց առջեւ : Թոյթ միւ-
թարական միանգամայն խրախու-
սական է մեզ համար տեսնել որ
ուրիշ ազատական թերթի թէեւ
արտաստպեցին իրարմէ յիշեալ սու-
լթանաշունչ տեղեկութիւնը, բայց
և այնպէս չը գլացան անոր շինծու
ձեւակերպութիւնը բացատրել, ժոյ
ղովրդեան միտքերը չը պղտորուելու
նպատակաւ :

Իւսպէն կօհիէ, Ֆրանսացի հա-
շակաւոր գրագէտն, որուն հայա-
սիրական յոգեածնները յաճախ-
կի կերեւին Ֆրանսական մամուլին
մէջ, և որուն հայերուն նուիրած
խրախուսական մէկ յոգեածին

թարգմանութիւնը հայ թերթե-
րու մէջ ալ տեսնուեցաւ, Անգլիա-
կան լեզուաւ գրքոյկ մը հրատա-
րակած է որով Միացեալ Նահան-
գաց հոգեածու ուշադրութիւնը կը
հրաւիրէ թշուառ Հայաստանի
վիճակին, անցեալի սիրտ փղծեց-
նող կոտորածները մանրամասնօրէն
կը նկարագրէ ու ազդեցիկ գրի-
չով թուրքիոյ քրիստոնէից վերա-
կենդանացման անհրաժեշտութիւնը
կը շնչտէ, որուն համար յոյժ
պատշաճ կը համարի Միացեալ
Նահանգաց գործնական աշակցու-
թիւնը ընդգէտ թուրքին :

Անցեալ թղթակցութեամբս կը-
սէի թէ տակաւին Ռեզիլիոյ մէջ
անպակաս է թրքաւորներու վոհ-
մակ մը, որ միշտ կը ջանայ Հա-
յաստանէ եկած լուրերուն հակա-
սական ձեւ մը տալ : Ասանցմէ մին
է գլխաւորապէս «Պրմիսկամի
կազէթ», որ թուրք կառավարու-
թեան Հայոց վրայ ծանրաբեռնող
հարկերը արդարացի կը հաշակէ
ու կը փառաբանէ թուրք զինուոր-
ներու անսահման հոգատարութիւ-
նը, որ իբրեւ թէ տիւ և գիշեր
կը պահպանեն հայ ժողովուրդը ո
և է վտանգաւոր պատահարներէ :
Եւ օրինակ կը բերէ Սասունէն ե-
կած վերոյիշեալ լուրը, զոր իր
ընթերցողներուն համառօտակի ներ-
կայանքէն զինք բարձրաձայն կը
հաշակէ թէ Հայերը միակ են պատ-
ճառն իրենց կրած տառապանքնե-
րուն :

Թոյթ ցտալի է որ մեր Լոնտո-
նի մեծանուն հայ անդիագէտները
անտարբերութեամբ կընթեռնուն
այսպիսի սղգաղեալ յոգեածներ,
ու բնաւ անոնց գէտ մաքառելու
տենջանք մը չեն ցուցներ, թէեւ
կը գտնուին մի քանի անձեր, ո-
րոնցմէ մին Բրօքի. թուականն,
որ առաջին տեղը կը բռնէ,
միթիւններու մէջ իր ծանօթ պեր-
ճախօտութեամբ կը ջանայ նոյնա-
տեսակ թերթի մարտնչութիւններ լու-
սաբանել թրքաւորներու խաւա-
րածած մտաց ոյս սփռելով : Իսկ
մեր միւս պատուելիները քաջուած
անգլիական ժողովարաններու մէկ
անկիւնը, Հայրենիքէն հեռու ու
հանգիստ, և անգլիացոյց գրիթէ,
մոռացած իրենց եղբայրներուն ճա-
կատագրային թշուառութիւնը,
խորին երջանկութիւն միայն կը-
փնտռեն : Հայ բանախօսը, հայ
պերճախօսը, հայ պատուելին որ
չեն ջանար իրենց ազգին իրական
վիճակը պարզել, բնականապէս
բուն ճշմարտութեան անտեղեկ
թողուած օտարը թրքական սուտ
տեղեկութիւններու վրայ հիմնուե-
լով, մեզ աննպաստ կարծիքներ
պիտի յայտնէ. հետեւաբար ասոր
պատասխանատուութիւնը կը ծան-
րանայ կրկին մեր ձեռնհաս բայց
անտարբեր հայերուն վրայ :

Համագրաս
Լոնտոն, 30 նոյեմ. 1901

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

(Արտաստպում «Նոր Կեանք» է)

Ամեն կողմէ մեզ կը դիմեն հարց-
նելով թէ ի՞նչ «Նոր Կեանք» Միու-
թեան խնդիրը եւ թէ ի՞նչ պէտք է
հասկնալ «Դրօշակ» վերջին յայտա-
րարութիւնէն :

Վերի յոգեածով կը կարծենք գո-
հայում տուած ըլլալ առաջին հար-
ցումին : Գալով երկրորդին՝ պատճառ
մը չունինք մեր ամբողջ մտածումը՝
միշտ, միեւնոյն բացարձակ անկեղ-
ծութեամբ՝ յայտնել վարանելու :

Հնչակեան կուսակցութեան ու Հայ
ժողովուրդին զգացումները թարգմա-
նող մեր ծանօթ յայտարարութիւն-
ները որպէս գի վճռական ու գործնա-
կան հողի մը վրայ առաջնորդէին :
Հաստատէին Միութեան խնդիրը կըս-
պասէինք որ Դրօշակն ալ համանման
տրամագրութիւններով, պատասխա-
նէր մեր կոչին : Չենք ուզեր ըսել
որ բոլորովին յուսախօս փացինք
մեր անկեղծութիւններուն մէջ, բայց
պէտք է նաեւ խոստովալի որ Դրօ-
շակի հակիւրճ յայտարարութեան ու
գին ու պարունակութիւնը չի կրնար
գոհացուցիչ համարուիլ Միութեան
ջերմեանից կուսակցութեան համար :

Մեր սա խօսքերէն վերջը, թէ Մի-
ութեան իրագործումին համար Հըն-
չակեան կուսակցութիւնը կը նկատէ
որ ո՛չ միջնորդի եւ ո՛չ ալ պայմանի
պէտք ունենալու են յեղափոխական
մարմինները» եւ թէ «Իսկապէս մը սի-
րուն եղբայրակցելու համար միջնորդի
մը, մանաւանդ չեզոք միջնորդներու
պէտքը նախատինք մըն է համոզուած
ու գիտակից յեղափոխականներուն ու
յեղափոխական կուսակցութիւննե-
րուն» : «Արեւմտեան Բիւրօն» զեռ
կըսպասէ «Չեղբի մը կողմէ ստանա-
լիք վերջնական խօսքին» :

Ամեն բանէ առաջ յստակ ու աներկ
զիմի ըլլալ որոշած ըլլալով՝ կը յայ-
տարարենք, որ մենք չենք գիտեր
չեզոք մը, որուն բանակցութեան
պաշտօն մը յանձնած ըլլանք : Նոյն-
պէս մեզ իմաց տրուած չէ թէ Արեւ-
մտեան Բիւրօն չէզոքի մը պաշտօն
յանձնած ըլլալ մեզ հետ բանակցելու
համար :

Աւելորդ չենք սեպեր սակայն նկա-
տել թէ Արեւմտեան Բիւրօն լաւ
կընէ Միութեան մասին ո՛ր եւ է բա-
նակցութիւն սկսիլ, հիմնուելով մի-
այն Հնչակեան կուսակցութեան կեդ-
րոնական վարչութեան պաշտօնապէս
եւ հրապարակաւ ըրած յայտարարու-
թիւններուն վրայ, քան թէ որո-
շումներուն սպասելով չէզոքի մը, որ
միութեան խնդրին վրայ բանակցե-
լու ողջ յատկութիւն չունի եւ ոչ ալ
յանուն հնչակեան կուսակցութեան
խօսելու իրաւունք :

«Կեդրոնական վարչութիւնը՝ ճշմա-
րիտ միութեան մը փափաքովը տո-
գորուն» չի կրնար այլքան փափուկ
խնդրի մը լուծումը յանձնել անհատի
մը, որ ոչ յեղափոխական կեանք ու-
նեցած է, ոչ ալ երկու կուսակցու-
թիւններուն մէջ երկար տարինիւ
ի վեր միութեան համար կատարուած
բանակցութեանց եւ անոնց ներկա-
յացուցած զօտարութեանց տեղեկա-
կէ : — Իսկ՝ առանց այս նկատումներուն
ալ՝ կեդրոնական վարչութիւնը՝ նոյն
պէս անշուշտ Արեւմտեան Բիւրօն
խնամակալի պէտք չունի : Մենք
ինքզինքնիս կարող կը զգանք մեր
գործը մեր ձեռքով տեսնելու : Ինչո՞ւ
բուն զանմէջ լինել չեզոքները :

Գունէ մենք մեր կողմէն՝ դուրսէն

միջնորդի մը պէտքը չենք զգար առ-
այժմ, եւ կը կարծենք որ այդ տեսակ
միջնորդներու ներկայութիւնը՝ վեա-
մէն զատ խեղ մը չունի, երբ, ինչ-
պէս կը հաստատենք, բանակցող կող-
մերը գիտակցութիւնն ունին իրենց
պարտականութեանց եւ առանց երկ-
րորդական մտահոգութիւններէ ազդ-
ուելու՝ կը Գանան անկեղծօրէն իրա-
գործել միութիւնը :

Բայց եթէ Արեւմտեան Բիւրօն կը
կարծէ որ միջնորդ մը—եւ չէզոք միջ-
նորդ մը, ինչպէս կըսէ ինքը—ան-
հրաժեշտ է՝ մենք չէ որ պիտի ուզէ-
ինք միութեան առջեւ խոչընդոտներ
ստեղծել այս պատճառաւ, եւ պատ-
րաստ ենք խրեմ ուզալ, իրեն ընտ-
րած միջնորդը ընդունիլ, եթէ այս
վերջինը յանուն զաշխակցութեան խօ-
սելու իւսաւասութիւնով ներկայանայ
մեզի :

Մենք մեր կողմէն՝ միջնորդ չպիտի
նշանակենք, կեդրոնական վարչու-
թիւնը կամ իր ներկայացուցիչը ան-
ձաժը պիտի վարէ բանակցութիւն-
ները :

Մենք կը կարծենք որ երկու կու-
սակցութիւններուն վարիչ կամ պա-
տասխանատու մարմինները կամ ա-
նոնց լիազօր ներկայացուցիչները գէտ
առ գէտ գտնուելու են, իրենք իսկ
ձեռք առած միութեան խնդիրը :

Ասկից՝ շատ մը առաւելութիւնիւ
զատ՝ առաջը պիտի առնէ կարող մը
թիւրիմացութիւններու, որոնք հար-
կաւորաբար պիտի զոյանային, եթէ
զուրկէն միջնորդ մը գտնուէր :

Ասկից զատ, միութեան համար ա-
մեն խօսք ու ամեն գործ պաշտօնա-
պէս առաջ տարուելով, եթէ՝ հակա-
ռակ մեր անկեղծութիւններուն ու
հատարին՝ միութիւնը չիբազործուի,
այն ատեն, պաշտօնական յարաբե-
րութիւններէն բացալայտարեւել զուր-
պիտի գայ, թէ ինչու միութիւնը ի-
րականացնել անկարելի կըլաւ եւ թէ
ո՞րն էր այն կուսակցութիւնը, որ,
ու է նկատուումով, արգելք կըլած է
միութեան :

Ասով կացութիւնը ճշդուած, անս-
տուգութիւնը վերջացած եւ ժողո-
վուրդը երկարատեւ ու տաժանելի մը-
ձաւանջէ մը՝ գոնէ մասափը ազատած
կըլլայ :

Արդ, Հնչակեան կուսակցութիւնը
պատրաստ է կուսակցական ամեն շահ
ու նկատում զոհել միութեան համար,
եւ թէ նոյնը ընել յանձն առնէ նա-
եւ Դաշնակցութիւնը, հայ ժողովուրդը
կրնայ այժմէն իսկ կատարուած իրո-
ղութիւնը մը համարել միութիւնը :

Եւ որպէսզի նորանոր ձգձգումնե-
րու, նորանոր թիւրիմացութիւններու
տեղի չտրուի՝ Հնչակեան կուսակցու-
թեան կեդրոնական վարչութիւնը՝
բացի այս հրապարակային յայտարա-
րութիւններէն՝ մասնաւոր նամակ մը
պիտի ուղղէ Արեւմտեան Բիւրօնին :
Միութեան իրագործումին քանի մը
հիմնական կէտերը առաջարկելու հա-
մար՝ որոնք, ընդունուելուն պէս, ու-
րիշ բան չի մնար ընելիք, եթէ ոչ
երկու կուսակցութիւններու կողմէն
լիազօր ներկայացուցիչներ կարգել,
ոյպէս գի միութեան իրագործումը
ստորագրեն եւ ընդհանուր ժողովի մը
զուլուման միջոցներ որոշեն :

«Նոր Կեանք» ի յառաջիկայ թուով
Արեւմտեան Բիւրօնէն մեր ստանա-
լիք պատասխանը կը ձանչենք հայ
ժողովուրդին :

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԶՐՊԱՐՏԻՉՆԵՐՈՒՆ

Շարժումն մէջ իմ անձին զէմ փո-
ղոցային հայկոյութիւններով խառն
մէկ քանի զբաղարարութիւններ տես-
նուեցան Իրաւունքի երգուեալ թշնա-
միներուն կողմէ:

Հայկոյութեանց պատասխանել չեմ
զիշանի թերթի սխալակները եւ ըն-
թերցողները խնայելով, իսկ գաղով
երկու որոշ ամբաստանութեանց, կը
յայտարարեմ թէ ասոնք ճիշդնապէս
սոս Եւ թագաւորական զբաղարարութեան
են: Ուստի կը հրաւիրեմ զիրենք որ
15 օրուան մէջ հաստատեն իրենց ը-
սածները, թէ ո՞ր Ռոստոմիցի կիներն է
որուն գոյքերը գրաւած ըլլան. որոնք
են հրապարակի այն անձերը որոնց
գրամը իւրացուցած լինիմ:

Եթէ համարձակութիւնը չունենան
ինձ նման ճակատագրաց հրապարակ
գաղու եւ իրենց լսածները որոշապէս
հաստատելու, զիրենք անգամ մը եւս
վատ (լաշ) զրպարտիչներ անուանե-
լով, ձեռք անեն իրենց միջոցներս
ինձ կը վերապահեմ:

Թ. Գոշրպէքեան

ԹՂԹԱԿՈՒԻԹԻՆ

ԹԱԻՐԻՉ, 7 ՆՈՅ. 1900

Այս վերջին ժամանակներս այստեղ
մի քանի ազգային արկածներ ունե-
ցանք. որոնք ցոյց են տալիս մեր
զարեւոր ռազմականութիւնն ու թող
ներքին ինձ ասել լրբութիւնը: Կար-
գացած կը լինէք անշուշտ, որ Ամեն.
Հայոց Վ. Կաթողիկոսը շնորհել է Ա-
տրպատականի հայերին իրաւունք,
ընտրելու իրանց թեմակալ - առաջնոր-
դին: Թաւրիզում երկու հայաբնակ
թաղեր կան, Ղալալ եւ Լիւալայ եւ
այդ երկու թաղում բնակողները միշտ
հակառակ են միմեանց, թէ ազգային
եւ թէ բոլոր գործերում եւ ունի շը-
նորհիւ. մեր նախորդող յեղափո-
խականներին երկու թաղերէն մի-
մեանց թոյն են թափում երբ հանդի-
պում են միմեանց, (ի հարկէ յարգելի
բացառութիւններ կան) բոլորն էլ
կոյր կուսակցական են: Այստեղ ընդ-
ժողով գումարեց պատգամաւորներ
ընտրելու. այսպէս թէ այնպէս ըն-
տրուեցան, դարձեալ կուսակցական
պրօպագանդա, Ղալայում պատգամա-
ւորներ են ընտրում այնպիսի անձինք
որոնք թէ ժողովրդի եւ ազգային եւ
թէ հոգեւոր գործերի վրայ այն դա-
ղափարն ունին, ինչպէս օրինակ մի
պարսկի, մի բաշիքօզուք եւրօպական
քաղաքավարութեան կամ կրթութեան
վրայ. այդ պատգամաւորներն մէջ
մեծ դեր է խաղում եւ աղայականու-
թիւնը:

Իսկ Լիւալայում ընտրում են գրե-
թէ օտարականները (այդ թաղում
տարածուած է Դաշնակցութիւնը. ա-
հալին դեր է կատարում, շատ են խո-
սում տէօօօր կենթարկելով...) իսկ գա-
ւառներին, (դարձեալ պրօպագանդա)
ընտրում են դարձեալ միեւնոյնները:
Ահաւում են պատգամաւորական ժո-
ղովները. աղմկալի եւ քիչ է մնում
տարաբնույթի հասցեն: Ընտրում են
Արիստաքէս Սեդրակեանին, զա չի
համաձայնուում գալ. դարձեալ ապուկ-
վայնառուն. վերջապէս Լիւալայի
Պատ. ընտրում են Եղիշէ Վ. Մուրա-
եանին. Ղալայիները չեն համաձայ-
նուում. բայց յիշուի ստորագրում
են որոշումը: Հեռագրում են Էջմիա-

ծին: Սկուում են խոսքով ինները.
Ղալայիք ասում են Լիւալայի պատ-
գամաւորները ապօրինի են ընտրել.
Լիւալայիք ասում են Ղալայիին է ա-
պօրինի: Վերջապէս հեռագիր է ըս-
տացում թէ Եղիշէ վրդ. մեկնեց.
սկսում է նորից պրօպագանդա Ղա-
լայում չդիմադրել վարդապետին: Թէ
Եղիշէն իբրեւ է, այսպէս այնպէս էլ
միածնից էլ Եղիշէի հակառակորդները
թղթեր, սոքեր, մէկնեք են ուղարկում
այստեղի նոր-Դարականներին (այդ
լրբերն են պրօպագանդա անողները),
Եղիշէ Վ. հասնում է Թաւրիզ. ամ-
բողջ Լիւալայ գնում է ընդ առաջ, իսկ
Ղալայից մի քանի հոգիներ. պէտք է
ասել որ Ղալայի կեդրոնական թաղը
(այնտեղ է մայր եկեղեցին, առաջնոր-
դարան), հարուստ թաղն է: Հե-
տեւեալ կիրակի Մուրաեանը քարո-
զում է մայր եկեղեցում. (խոսն բազ-
մո թիւն կար) երեսներին է տալիս
այդ սրկականի արածները. յայտնում
է թէ ինքը մոռանում է բոլորը եւ
խնդրում որ համարալի լինեն, ձեռք
ձեռք տան գործին միասին, ինկա-
տի ունենան ազգի օգուտը եւն. մի-
եւնոյն մտքով մի քարոզ խօսում է
եւ հետեւեալ կիրակի Լիւալայի եկե-
ղեցում: Երեւում է որ բոլորն էլ
հանդարտել են. արդեօք նորից խոս-
վութիւններ բարձրացնելու. թէ իս-
կապէս զգում են իրանց սխալը. այդ
Աստուած գիտէ: Բայց իմ աչքում այդ
վարդապետ լաւ Գործող է երեւում.
արդեօք չե՞մ սխալում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Տեղւոյն Ազգ. երկսեռ վարժարա-
նաց նախկին տնօրէն Տ. Վահան Շահ-
րիման՝ իր «Նաեւէն» վերնագրով Նոյ.
8 թուականի յայտարարութեամբ պա-
տասխանած էր, ընդգէմ Վահան Մաղ-
մանեանի անբաստանութեան:

Թէ՛ ինքն ինքնաբերաբար առաջար-
կած է սեղոյն թաղ. նախկին խոր-
հորդին՝ Օր. Բ. Ք., Պ. Մաղմանեանի
քննին, վարժուհիի պաշտօնին հրա-
ւերելու:

Թէ՛ Օր. Բ. Ք. իրեն առաջար-
կուած տալիս թոշակին անբաւականու-
թեամբ պատճառով, մերժած է վա-
րժուհիի պաշտօնը ստանձնել տեղւոյն
Ազգ. վարժարանաց մէջ. հետեւաբար
Պոլսէն մեկնելու պատրաստուած չէ
այն ատեն:

Թէ՛ Օր. Բ. Ք. ի մերժումէն յետոյ,
Վահանայէն կանչած է Օր. Էֆրազ Դոն-
չէկիւլեանը. առանց այդ պաշտօնը
Պ. Լեւոն Սարգիսեանին յանձնելու
փորձ մը երբեք ընելու, եւ

Թէ՛ զպրօքական ժամանակացոյցի
կազմութենէն յետոյ, ուսուցչի պա-
կասը սեփականած ատեն, ինքն առա-
ջարկած է խորհուրդին Պ. Լեւոն
Սարգիսեանը պաշտօնի կոչել:

Այս յայտարարութիւնները բաղդա-
տելով նախկին Թաղ. Խորհուրդին
արձանագրութեանց հետ, կէտ առ
կէտ ուղիղ դատեմ:

Տէր խմբագրապետ, Թաղ. Խորհուր-
դի՝ ձեր առաջարկին վրայ, հետաքը-
քուող հայ մամուլին ծառայութիւն
մը մատուցանելու փափաքով, հրա-
տարակութեան կուտայ հետեւեալ ար-
ձանագրութիւնները, զորս ստորա-
գրած են նախորդ Թաղ. Խորհրդոյ
Պատ. անդամը, նոյնպէս նամակը Պ.
Մաղմանեանի քննին, Օր. Բ. Ք. ի,
որուն վրայ հրաւիրուած է եղեր, Պ.
Վ. Մաղմանեանի ամբաստանութեան
նը համաձայն, Պրն. Վ. Շահրիմանի

եւ Լեւոն Սարգիսեանի կողմանէ,
«Պոլսէն մեկնած ատենը, Պոլսոյ ու-
տիկանութեան ուշադրութիւնը»:

Ահաւասիկ արձանագրութիւնները:

Նիստ իններորդ.

5 Սեպտ. 1899

Տ. Շահրիման Ժողովոյ ներկայեց
առաջարկ մը առաջին վարժուհիու հա-
մար Օր. Բ. Ք. : Ժողովը որոշեց յի-
շեալ Օր. Բ. Ը պաշտօնի կոչել. 1200
լէֆ տարեթոշակով եւ յանձնարարեց
Ս. Գազազեանի բանակցել իրեն հետ:

Նիստ ասներորդ

12 Սեպտ. 1899

Ա. Գազազեան Ժողովոյ ներկայեց
Օր. Բ. ի մէկ գրութիւնը որով կը
յայտնէ թէ սահմանուած տարեթոշա-
կով չընդունի առաջարկուած պաշ-
տօնը:

Նիստ ասներկուերորդ

23 Սեպտ. 1899

Տ. Շահրիման Սեպտ. 22 թ. նա-
մակաւ կը պահանջէր ուսուցչներու
ամբողջացումը: Տնօրէնին առաջար-
կութեամբ որոշուեցաւ հրաւիրել
վարժուհի Օր. Էֆրազ Դոնչէկիւլեա-
նը Վառնայէն. այս գործը յանձնուե-
ցաւ Տնօրէնին:

Նոյնպէս Տ. տնօրէնին առաջարկու-
թեանը վրայ յանձնարարուեցաւ իրեն
բանակցել ուսուցչի Լեւոն Սարգիս-
եանի հետ եւ արդիւնքը զեկուցանել
Ժողովոյ:

Ահաւասիկ նոյնպէս պատճէնը Օր.
Բ. Ք. ի նամակին.

Պարո՛ն,

Ներում կը խնդրեմ անմիջապէս պա-
տասխանել չ'կարենալուս նամար, սա
միակ պատճառաւ որ դեռ երէկ իրի-
կուն տուն գործայ ուր գտայ ձեր եր-
կու գրութիւններն ալ: Առաջինով

Թաղ. Խորհրդոյ եւ Հոգաբարձու-
թեան կրկին մարմիններու կողմանէ
իրք այդ մարմիններու անդամ. կը
հրաւիրէիք զիս ստանձնել տեղւոյն
Ազգ. Աղջկանց վարժարանի գլխաւոր
ուսուցչուհիի պաշտօնը. հազար երկու
հարիւր (1200) լէֆ տարեթոշակով:

Այսօր ի պատասխան կուգամ յայտ-
նել թէ թոշակի անբաւականութեան
պատճառով պիտի չը կարենամ ըն-
դունիլ տեղւոյն Պատ. Թաղ. Խորհր-
դոյն եւ. Հոգաբարձութեան հրաւերը.
տարբեր բան եթէ համաձայնինք: Հե-
տեւաբար ալ պէտք չեմ ունենար ձեր
երկրորդ անխառն գրութեան զոր
ներկայ ձեզի կը վերադարձնեմ:

Կը մնամ անկեղծօրէն
Բ. Ք.

Կ. Պոլիս, 9 սեպտ.

Այս առթիւ թաղ. Խորհուրդս՝ կը
յայտարարէ թէ ամեն անոնք որոնք
կուղեն անձամբ քննել այս արձանա-
գրութիւնները, ինչպէս նաեւ նախորդ
Պատ. Թաղ. Խորհրդոյ հաշտօնի
կոչուող վարժուհիներու միջեւ փոխա-
նակուած թղթակցութիւնները, կըր-
նան զիմել, մինչեւ ամիս մը, կիրակի
օրերը, մինչեւ կէս օր, Թաղ. Խոր-
հրդաբան:

Խնդրելով, Տէր խմբագրապետ, որ
հաճիք ներկայ հրատարակել Ձեր
թերթին յառաջիկայ թուոյն մէջ, կը
մատուցանենք ձեզ մեր յարգանաց
հաւաստիքն:

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյն
Ատենապետ Ատենապետ
Պ. ՏԻՔԱՌԼՈ 2. ՍԱՐԳԻՍԵԱՆ
Փիլիպէ, 10 Նոյ. 1901

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄՅԵՓԱՆ ՓԱՏԱ

Ստեփան փաշա Սարգսեան, ո-
րուն ծանրապէս հիւանդ եւ վիճա-
կը յուսահատական ըլլալը ծանու-
ցած էինք, կնքած է իր մահկա-
նացուն 79 ամեայ հասակին մէջ:

Հանգուցեալը Պոլսոյ բժշկական
վարժարանի անդամիկ շրջանա-
ւարտը ըլլալով, իր բժշկական
ճիւղի ուսումը աւարտած է վի-
էննայի մէջ: Պոլիս վերադառնա-
լուն պէս, 1849ին հազարապետի
աստիճանով բժշկական վարժարա-
նին բաժնէսէօն անուանուած եւ
24 տարի շարունակած է: Յետոյ
10 տարի ալ Լիվա փաշայութեան
աստիճանով Սպարապետութեան
գումը առողջապահական կեդր-
ժողովոյ անդամ էղած է: Իր այս
պաշտօնավարութեանց միջոցին ու-
րիշ սովորած անկեղծ եւ կարեւո-
րագոյն պաշտօններ ալ վարած ու
իր ստղանդը փայլեցուցած է պե-
տական ու բժշկական գործերու
մէջ: Ինչպէս որ Ռուսիոյ Արեք-
սանդր Բ Չարը Ս. Ստանիսլաւի
Գ. կարգի պատուանշանը տուած
է:

Իր Բժշկական տրուեստին կի-
րառութեան մէջ ալ Տօք. Ստե-
փան փաշա չատ խղճամիտ եւ վի-
հանձն եղած է. իրեն կանոն ընտ-
րած էր եկեղեցական, վարժապետ
եւ զրոգէտ ձրի դստրման:

Հանգուցելոյն ազգային-վար-
չական կեանքը 50 տարի տեւած
է: Ինք Սահմանադրութեան հիմ-
նադիրներէն մին եղած է. բազ-
մաթիւ պաշտօններ վարած, և իր.
րեւ երեսփոխան ազգ. ընդհ. Ժո-
ղովոյ մէջ տիրահաշտի ներկանի
մեքենայութեանց քաջաբար գի-
մագրաւել գիտցած է իր հրապա-
րիշ պիւճախօսութեամբ. ազգա-
յին շատ մը օրինագիծներ ու ծը-
րագիրներ խմբագրած է, որոնք
իր նուրբ և հեռատես մտքի մը
արդիւնք ցարդ կը գնահատուին:

Ստեփան փաշա նշանաւոր ու-
սումական մը, գիտուն մը ըլլա-
լով հոգեբարձ իր կենաց մինչեւ
վերջին վարկեանի երկուցած քը-
րիտոնեայ մըն էր:

Մանկապարտեզպանահիւսիսի
պատրաստելու համար վիլլին տա-
րիներս պոլսոյ մէջ հաստատուած
կիրակնօրեայ դասախօսութիւն-
ները Տիկին Մատակեանի մահ-
ուամբը դադրած էին: Ուսումնա-
կան խորհուրդը այս անգամ Տ.
Յովհան. Հինտեանի և Տիկին Ա.
գապիի յանձնարարած է Բերայի
արհեստանոցին մէջ կիրակնօրեայ
դասընթաց մը կրկին հաստատել:
Նոր ծրագիրը արդէն պատրաստ-
ուած է Տ. Հինտեանի կողմէ և
ընդունուած խաւով զէն: Իւրա-
քանչիւր ուսանող ամսական 20
դրը պիտի վճարէ:

ՀԱՎԱՏՈՒՄ ԲՕԼԻԹԵԳԻՅԷ

ԹԻԻՐԳԻՍ

Տիրապետի վերաբերյալ իրենց քերականության վերաբերյալ վե Արապյան պետիկոնտե շեմիտ ճեղքվելով վուգու պուլմազտա օլուպ, հիւքիւմէթ անլէրի թէսքին իթմէկէ մուգթէտիր օլամայօր։ Մէջքիւր վաճի զապիլէրին շու գաղկալարընտան էն զիյատէ միւթէզարըր օլան թէքրար խրիսթիյան վէ պաշլընա էրմէնի քեօլիւէր օլաճաղը շիւք հէսիք տիր։

— Պապը Ալինին ըստէն վերտիկի մալիւմաթ իւզրէ, 60 քիշիտէն իպարէթ պիր էրմէնի չէթէսի Անգրանիկին գոմանտաք ալթընտա Արաք մանապըրընա սըղընմըջ օլուպ, նիհայէթ թէսլիւ օլուպար։ Շագիլէրտէն իքիքիլ վէ պիր օնպաշը էօլմիւշէր։

— Հիճաղ վերաբերյալ տէքրէրէ մաաշ էօտէնիւմէտիկի սէպէպլէ, ըստանա գաղգընմըջ օլտըզարը վէ աղըրըն ճիտտէտէքի ճամիի գապլի ու իսթիլա իթտիքիլէրին «Բառի Նուէլ» պիւտիրմիշ տիր։

— Մուշ, Սաուն վէ Պիթիւս էրմէնիլէրի Գիւրտէր հէնի գըրէն պաշլաճաղար գորգուք իւլէ տէհէթ իշինտէ պուլընըյօլար։

— Էվլէրի նիւսիւմըգտէ հաղտըղըմըջ իւզրէ Միւս Սթօն վէ մատամ Սթիլքա էօտիւրիւմիւշ օլուպ, ճէսէտէրի Սիլանիք վիւլայէթի տախիլինտէ Տուպիցա ճիւլարընտան պուլընմըջ օլտըղընը Սթանպօլտան վիլէննայա պիւտիւրիւմիւշ, Սէլանիք վալիսի պուհա վատիսի ըստէն թաստիք իտուպ մէզպուրէլէրին պիր ալտան պէրու գաթիլ օլընմըջ օլտըզարընը պիւտիրմիշ տիր։

Պաղըրըն պու հապատիսի շիւքհէլի վէ թիւք հիւքիւմէթիւնի պիր օլուպաղըղը զանն իտէյօրլար։

— Մէթրօլիցատա իսա ֆէրատ իսմինտէ պիր Արնափուտ պիր սըրպ թիւճարտան պէօյիք գընտի թալէպ իթմիշ վէ ընտտ օլընմըջ օլտըղը սէպէպլէ, հիտտէթլէնուպ Սըրպը վուրմուշ էօլտիւրմիւշ։ Հիւքիւմէթ իոն ճանիի սէրպէթիւ պըրազմըջ։ Պու վուգուաթտան պիր գաշ կիւն սօնրա Միթրօլիցատա ըուս վէ սըրպ աճէնթի օլան զաթը՝ շէհիւրտէն եալըմ սաաթ իրազ պիր մահէլտէ, Արնափուտար թուլուպ էօյտիւրմէք թէհէտիտի իլէ մէրգուս իսա ֆէրատը թագիպ իթմէմէթ իշին Սըրպար իւզերինէ թէհէսիլինի իճրա իթմէյէ սէօզ վէր» տէրլէր, վէ պու սէպէպլէ մէրգուս աճէնթի պիրմահէլէ գաբարլար։

Սթանպօլ ըուս վէ սըրպ էլիլիլէրի Պապը Ալիլէ միւրաճաթ իտուպ, աճէնթի սաղ սէլիւ գուրթուրուլմաթընը վէ իսա ֆէրատ նամ ճանիին տէրտէսթ օլընմաւսընը թալէպ իթմիշէր տիր։

ՏԱԽԻԼԻԹԷ

Էվլէրի կիւն Սօփիատա Մաթիթիւրլար պիր պէօյիք միթինկ թէհէմմիւ իտուպ, շիւտիքի մէքէլի գօմիթէնի թագպիհ (պարսուէլ) իտէլէք, գօմիթէ ընիսի Մ. Միւրալիօվիչին վէ գօմիթէնի իսթիֆաթընը թալէպ իթտիլէր։

Մալիւս օլտըղը իւզրէ, Մ. Միւրալիօվիչ ախիլէն շէհիւրմիլէ վէ Պուլկարիանըն սալիւր պաղը մա. հէլլէրինէ կիտուպ, նաթգլար իրատ իտէլէք, էվլէրի գօմիթէնի իշլէրինի իսթիհզա իթմիշ վէ Բըննա հաղընթէրինէ գարշը եաղընգաղ լիսան գուլլանմըջ վէ նիհայէթ Մաթիթիւրլարըն պիր գընմընը հիտտէթլէնտիրմիշ իտի։ Պախուսուս Պօրիս Սարափօթ թա. իրաֆտարը օլանլարըն գարէգընալընը թահիք իթմիշ օլմաղլէ, պուլար էն զիյատէ շիւտիքի գօմիթէնի իսթիֆաթընը թալէպ իթմէքտէ տիրլէր։

— Պուլկարիանըն Ֆրանսըզ պան գալարընտան իսթիգրաղ իտէհէլի 120 միլիոն ֆրանգըն գօնթիւթ նամէսի էվլէրի կիւն Սօփիատա իսթիլանաճաղը մուգարէր իտի։ Պու մէպաղա մուգարիլ թէհէմի. նաթ օլարտգ թիւթիւն մօնօփօլը մէղըիւր պանգալարտան թէրթիպ օլընան պիր սինտիգայա իհալէ օլընաճաղընտան, իշպու սինտիգանըն ըրիյաթի. Պուլկարիանըն սապըգ նաղըրլարտան Մ. Նաշէվիլէ թէպտի օլընաճաղը մուգարէր իմիշ։

— Սօփիատա օսմալը գօմիթէրի Նէհիպ Մէհմէմէ էֆ. խարը վաղըթտան պէրու Սթանպօլա կիթմիշ օլուպ, ախիլէն հինէ Սօփիայա ալտէթ իտէլէք, Սուլթանըն եէվմի վէնաթէթի մինասիպէթլէ, մուլթանթտան պիր զիտիթէթ քէշիտէ իթմիշ. ֆագաթ Պուլկարիա խարիճիլէ նաղընը Մ. Տանէֆ մէմուրիլէթի իգթիզասընտան թէպըրիգէ կիթմէք լաղըմ իքէն կիթմէմիշ տիր։ խարիճիլէ նաղըրընը շու հարէքէթի թիւքիւս իլէ Պուլկարիա արասընտա մինա. սէպաթը ըօյիթիքիլէնի բէք կէր կին պիր հալտէ պուլընտըղընը իմա իտէր։

— Տօպրիշ գաղաղըյա քէօսէլէր նամ քէօյտէ, պիր թիւք գըղը քէնտիսի իլէ իզտիլմաճ իթմէք իսթիլէն պիր տէլիգանլը իլէ կէօրիւմէքտէ օլտըղը լիսանա տիւշիւրիւմիշ օլմասընտան, վէ վալիտէյնի մէրգուս տէլիգանլըյա վէր մէք իսթիլմէթիլէրինտէն, գըղ նամուսը լէքէլէնմիշ հիսապը իլէ, իւզերինէ կաղ հաղը տէօքէրէք վէ պիր քիպրիթ շալարաղ բարլար։ Գուրթարմայա կէլէն բէտէրինի սագալը թուլթուլուր։ Նիհայէթ գըղ 3-4 կիւնտէն սօնրա միւրիլէ. էսիլէն էօլիւր։

— Սօփիատա կէլէն շալէթա կէօրէ, Պուլկարիանըն Ֆրանսա իլէ թիւճարըղը իլէրի կէօլթիւր-

մէք մագսէտի իլէ Սօփիատա պիր Ֆրանսըզ—պուլիար պանգաղը թէ. էսիս օլընաճաղը ըմրշ։

ՍԲԱՆԻԱ

Պէլկարտտան ալրնան մալիւմաթա պինտէն, Պուլկարիանըն Սօպրանիէ տղալարը վէ Սերպիանըն Սըուպիլնա մէպուսարը պիրպիլէրինէ մուհապպէթի տօսթանէլէրինի իպրաղ իթմէք իշին Սօփիա վէ Պէլկարա բաթիթալարընա իտէթիլիթա իտէհէքլէր իմիշ։

— Գրալիցա Տրափան՝ զէվճի Գըրալ Ալէքսանտր իլէ՝ Բէթրապուրկա կիտուպ Զարտան գապուլ օլընմասը իշին, էնվաթ թէտպիրլէրէ միւրաճաթ իթմէքտէ իտի։ Պու տէֆա Պէլկարա ըուս էլիսի Զարըն սէլալարընը Գրալիցայա թէպլիլ իթմիշ իտէտէ, գապուլ օլընաճաղընա տալիւր պիր մալիւմաթ եօգ տըր։

— Պէլկարա բօթա տրէքթօլլարընտան Մ. Զիւնիլ 40000 ֆր. էօհտէսինէ կէշիւրմիշ վէ գաշմըջ տըր։ Տիկէր Բօթօվիշ նամ պիր տրէքթօլլարտան տախի շիւքհէ օլընարագ, թէֆիլիշաթա պաշլանըլմասընտան տօլար, պու քէնտիսի թէլէթ իթմիշ տիր։ Ֆագաթ էվլէտէն գաշմըջ օլան Զիւնիլ սինօրա եաղըն թուլթուլմըջ տըր։

ԵՈՒՆԱՆԻՍԹԱՆ

Աւետարանըն թէրճիւմէսի մէսէլէսինտէն տօլարը գուրուր իտէն իսթիլալ սէպէպի իլէ, Ալթինա միտրապուլիտի Գիւր. Բրօքրիսու մէհպուրիլէթ թահիլընտա իսթիֆա իթմիշ օլտըղընտան, շիւտիթիսթիֆաթընը կէրի ալմագ իսթէյալ, Սիւտգ հուզուլընտա վէրիլ մէյէն իսթիֆանըն էհէմմիլէթի օլամայաճաղըն իտուա իթմէքտէ տիր։ Հապուրի, տիկէր թա. իրաֆտան մէքթէպլիլէր թէքլար նիւմայիշաթա պաշլաթագ թէհտի. տինտէ պուլընըյօլար, Հիւքիւմիլ Նիհայէթ մէտրապուլիտին գաթիլէն իսթիֆաթը գապուլ օլընմըջ պիթմիշ օլտըղընը իլան իտէրէք էհալիլ թէսքին իթմիշ տիր։

ՕԳՈՆԷԼԷՐԻՄԻՇԷ

Տէֆաթլէ իլան ու իսթարա. թըմըղ իւզերինէ, կաղէթա պէտէլինի կէօնտէրմիշ օլան ապօնէլէրիլէք արղը թէհէքիւր իթմէքլէ պէրապէր. աքսի օլարագ, պու կիւնէ գատար ընճա ու իսթարա. թըմըղա գուլպա վէրմէյուպ, պօրճ լարընը էօտէմէյէլիլէր թէհէսիլէթի. միզի պէյան իտէլէք, պիր տաճա, սօն տէֆա օլալագ, զեկղեմբերին 15ինէ գատար օ՝ կիպիլէրէ վատէ վէրուպ, էկէր միւտէթի մէքլիւրէ գարֆընա իյֆաթ տէյն իթմէլէր իսթիլալ իսթիլանա ի. սիլէրի իլէ կաղէթալա տէրճիէ հաղըմըղը թալէպ իտէհէլիլ։

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ

Վէսէյօ խուճըր պիտի ներկայացնէ «Վահան Մաթիկոնեան» տղալին յղարգութիւնը. վսղը ցերեկ ժամը 3ին։

Իսկ խաւաշիկալ իրեքշարթի գիշեր, պիտի ներկայացուի, ի նպատակ Պ. Պ. Երամանի և Շաքարնանի, «Կառնպանը» տրամ 4 արար։

Կը յանձնարարուինք հայ թատերասէրներուն որ իրենց ներկայութեամբ քաջալերեն յիշեալ երկու դերասանները։

«ԿԱՆԱՆԴԶԷՔ»

Պ. Վ. Քիւշիւքեան «Կաղանդէք» անունով տետրակ մը հրատարակած է 32 փոքրագիր երեսներով։ Տետրակին պարունակուածին է ընտանեկան լեզուով հաճելի ոտանաւորներ և «Կաղանդի գիշերը» խորագրով արձակ մը։ Գրին է 40 սանթիւմ. կը ծախուի Ա. Զարպէնէլեան գրատունը։

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԿԱՄ

ՄՐԾՈՒՆՁ ՀԱՅԿԱՆԱՆ

Այս երգարանի Բ. տպագրութիւնն է որ այսօր լոյս տեսաւ, աւելի ճոխացած, բարեփոխուած եւ մաքուր թուղթի վրայ տպուած։ Հակառակ գնոյն աժանութեանը, կը պարունակէ այն բոլոր հին եւ նոր ազգային երգերը որոնք ընտիր եղանակ ունին ու կերպուին հայ ժողովուրդի ամեն դասակարգէն։

Գին 1 Ֆր.

Ստանալու համար բոլոր ծախքը 10 անգիթ պէտք է միատեղ զրկիլ Խաւուրի խոթարթեան վաճառ։ Կը ծախուի նաեւ Գահիլէի մէջ մեր գործակատար Տ. Կարապետ Երզնկացեանի խանութը, Ուստը (Ամբրիկա) Տ. Յակոբ Ֆրանցի, Զիքալօ Տ. Մ. Գարակեալուրեան եւ Ընկ. քով Պուգրէշ Տ. Ղազար Պոզոսեանի վաճառատունը, Քէօստէնէ Տ. Ղ. Կըռ, Նիկեանի քով։

ԱԶԴ

Երջանկայիշատակ Միթթար Սըբա Հօր յորեկանին առթիւ վերահրկի տպարանէն պատրաստուած Միթթար անուն պատկերազարդ հատընտիր գիրքը որ ամեն բանասիրաց ընթերցմանը իրաւամբ արժանի է, կը ծախուի վաճառ, Ա. Զարպէնէլեանի հայկական գրատունը. թղթատարի ծախքը գրատան վրայ ըլլալով, գին 6 ֆրանք։

Одговорникъ Н. Драгулевъ

Печатница «Взаимность», Варна